ԵԴ1/3944/07/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Երևան քաղաքի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության քրեական
դատարան, նախագահող դատավոր՝ Վ.Մելիքյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Մ.Պապոյան

23 նոյեմբերի 2026 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 16-ի որոշման դեմ «********* *********» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Էրիկ Ալեքսանյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2024 թվականի հուլիսի 17-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնում

ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է թիվ 15126424 քրեական վարույթը:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2024 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է և թույլատրվել խուզարկություն կատարել «********* *********» ՍՊ ընկերության 100 տոկոս սեփականատեր և տնօրեն ******* *********-ի ***********-ի բնակարանում, իսկ առկայության դեպքում՝ նաև դրան օժանդակ շինություններում:

3. Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշման դեմ «********* **********» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Է.Ալեքսանյանի հատուկ վերանայման բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2024 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ թողնվել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ «********* *********» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Է.Ալեքսանյանը բերել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի նոյեմբերի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

5. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ թույլ են տրվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ Սահմանադրության 32-րդ, 63-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածների խախտումներ, բացի այդ, հիշյալ դատական ակտը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԾԴ/0073/07/15 գործով կայացված որոշմանը:

5.1. Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարաններն իրենց որոշումների պատճառաբանական մասերում ընդհանրական և վերացական կերպով նշել են, թե նախաքննության մարմնի միջնորդությանը կից ներկայացված նյութերը համակցության մեջ վկայում են այն մասին, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացուցողական գործողություն կատարելու բավարար հիմքեր: Մինչդեռ, վիճարկվող որոշումներից չի երևում, թե ի՞նչ նյութերի մասին է խոսք գնում, միջնորդությանը կից ինչպիսի՞ փաստական տվյալներ են ներկայացվել, որոնք էլ

ստորադաս դատարանները բավարար են համարել՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը սահմանափակելու համար:

Բողոքաբերի գնահատմամբ՝ ստորադաս դատարանները դատական ակտերում չեն որոշակիացրել, թե որոնք են եղել այն փաստական տվյալները, որոնց հիման վրա նախաքննության մարմնի միջնորդությունը հիմնավոր է համարվել, ինչը, բողոքի հեղինակի համոզմամբ՝ անհամատեղելի է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիմքում ընկած արդար դատաքննության իրավունքի հետ:

Ըստ բողոքաբերի՝ վիճարկվող որոշումներով չի հիմնավորվել խուզարկության կատարման փաստական հիմքը: Մասնավորապես, քննիչի կողմից որպես բնակարանի խուզարկության կատարման փաստական հիմքեր դատարանին ներկայացվել են բացառապես ոստիկանության համապատասխան բաժնում ազգային անվտանգության ծառայությունից ստացված տեղեկությունների հիման վրա իրականացված ստուգողական գործողությունների արդյունքները, որոնք թեև նույնպես որոշակիացված չեն դատական ակտում, բայց ակներև է, որ դրանք վերաբերում են օպերատիվ բնույթի տեղեկանքներին, քանի որ նշված մարմիններն իրավասու են իրականացնել միայն օպերատիվ բնույթ կրող ստուգողական գործողություններ, որոնց արդյունքներն իրենց ամրագրումն ստանում են բացառապես օպերատիվ տեղեկանքներում, որոնք էլ չեն կարող «բավարար տվյալ» չափանիշին համապատասխանել և հիմք հանդիսանալ բնակարանի անձեռմխելիության իրավունքը սահմանափակելու համար: Ըստ բողոքաբերի՝ նման տեղեկանքները կարող են հիմք հանդիսանալ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը սահմանափակելու համար, եթե առկա լինեն նաև այլ առարկայական փաստական տվյալներ, որոնք թույլ կտան այդ օպերատիվ տեղեկանքները գնահատել և ստուգել, իսկ այդպիսիք սույն դեպքում բացակայում են, հակառակ պարագայում դրանց վերաբերյալ նշում կլիներ վիճարկվող դատական ակտերում:

5.2. Բողոք բերած անձը նշել է նաև, որ ստորադաս դատարանները փաստացի անտեսել են Վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵՇԴ/0073/07/15 որոշմամբ արտահայտած դիրքորոշումն առ այն, որ խուզարկության կատարման փաստական հիմք կարող է հանդես գալ ցանկացած տվյալ, որը հնարավոր է գնահատման ենթարկել, և իրենց դատական ակտերով հակասել են հիշյալ իրավական դիրքորոշմանը:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի դատական ակտը և կայացնել դրան փոխարինող նոր դատական ակտ՝ մերժելով «********* *********» ՍՊ ընկերության սեփականատեր և տնօրեն ********* **********-ի բնակարանում, իսկ առկայության դեպքում՝ նաև դրան օժանդակ

շինություններում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. «Խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին» նախաքննության մարմնի որոշման համաձայն՝ *«(...) ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնի քննիչ (...) Ջ.Հ.Շմավոնյանս, ուսումնասիրելով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունից ստացված նյութերն այն մասին, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈ ԳՎ ՄՄԴՈՒՀԴՊ վարչության ֆինանսատնտեսական և մտավոր սեփականության ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնում, ԱԱԾ-ից ստացված տեղեկությունների հիման վրա իրականացված ստուգողական գործողությունների արդյունքում, փաստական տվյալներ են ձեռք բերվել առ այն, որ ««********* *********» ՍՊ ընկերության տնօրինությունը կամ իրավասու անձինք, խախտելով ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի թիվ 1048-Ն որոշման 351-րդ կետով նախատեսված պահանջները (...), 2023-2024թթ. ընթացքում թվով 295 ֆիզիկական անձանց տրամադրել է ամբարձիչ սարքավորումների (կռունկ, վերհան, բեռնիչ, առասանող) որակավորման վերաբերյալ ընկերության կնիքով վավերացված, իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող կեղծ վկայականներ: Վերոգրյալի կապակցությամբ 2024 թվականի հուլիսի 17-ին (...) ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է թիվ 15126424 քրեական վարույթը: (...) Նախաքննության ընթացքում տեղեկություններ են ձեռք բերվել այն մասին, որ «********* *********» ՍՊ ընկերությունն (ընկերության 100 տոկոս սեփականատերը և տնօրենն է հանդիսանում՝ ******* ********-ի **********-ը, ծնված *****թ., հաշվառված՝ ****** քաղաքի **********-*********, ********** փողոցի **-րդ շենքի **-րդ բնակարանում) իրականացնում է վերամբարձ կռունկների, գյուղատնտեսական նշանակության ծանր տեխնիկայի վարորդների, ինչպես նաև այլ խիստ մասնագիտական հմտություններ պահանջող վարպետների սերտիֆիկացում (վարորդական իրավունքի վկայականների և որակավորման), որի ընթացքում թույլ է տալիս մի շարք խախտումներ, մասնավորապես. Կռունկավարի կամ գյուղանտնեսական նշանակության ծանր տեխնիկայի շահագործման իրավունքի վկայականը ֆիզիկական անձանց տրվում է առանց քննություն հանձնող անձի կողմից հանձնաժողովին ներկայանալու՝ 90.000-ից մինչև 120.000 ՀՀ դրամ գումարի դիմաց: Բացի այդ, ««********** **********» ՍՊ ընկերության կողմից տարբեր ֆիզիկական անձանց 20.000-ից մինչև 50.000 ՀՀ դրամի դիմաց տրամադրվում է նաև շինարարություն*

*իրականացնող վարպետների կարգեր, այն պայմաններում, որ ֆիզիկական անձանց հավատարմագրում իրականացնող ընկերությունների հավատարմագրումն իրականացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից, սակայն համաձայն ստացված տեղեկությունների «********* *********» ՍՊԸ-ն ներկայումս չունի համապատասխան հավատարմագրում նկարագրված գործունեությամբ զբաղվելու համար:*

*Բացի այդ, «********* *********» ՍՊ ընկերության կողմից ներկայումս իրականացվում են հավատարմագրման դասընթացներ՝ անհատական և խմբակային սկզբունքով դասընթացների տևողությունը առնվազն 3 օր է (կախված մասնակցի կարողություններից), իսկ արժեքը՝ 40.000-50.000 ՀՀ դրամ է: (...)*

*Նկատի ունենալով, որ «********* *********» ՍՊ ընկերության 100 տոկոս սեփականատեր և տնօրեն ******** *********-ի **********-ի բնակության՝ ******* քաղաքի *********-*********, ********* փողոցի **-րդ շենքի **-րդ բնակարան հասցեում և դրան կից օժանդակ կառույցներում հնարավոր է պահվեն իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող կամ իրավունք վերապահող կամ պարտականությունից կամ պատասխանատվությունից ազատող փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, դրանք պատրաստելու համար սարքեր, սարքավորումներ, ինչպես նաև այնտեղ աշխատանքային համակարգիչներ և էլեկտրոնային սարքեր լինելու դեպքում, դրանցում կարող են պահվել նկարագրվածի վերաբերյալ տեղեկություններ, (...) [ուստի] անհրաժեշտություն է առաջացել (...) ******** *******- ի ********-ի բնակության (...) հասցեում և դրան կից օժանդակ կառույցներում խուզարկություն կատարել (...)»[1]:*

8. Առաջին ատյանի դատարանը 2024 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Տվյալ դեպքում գտնում եմ, որ նախաձեռնած վարույթով միջնորդությանը կից ներկայացված նյութերը համակցության մեջ վկայում են այն մասին, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացուցողական գործողություն կատարելու բավարար հիմքեր, նկատի ունենալով, որ խուզարկության կատարման արդյունքում կարող է ձեռք բերվել վարույթի համար նշանակություն ունեցող ապացույց:*

*Այլ կերպ ասած՝ գտնում եմ, որ հիմնավոր է քննիչի այն ենթադրությունը, որ «********* *********» ՍՊ ընկերության 100 տոկոս սեփականատեր և տնօրեն ******* **********-**********-ի բնակության՝ ******** քաղաքի ********-********, ********** փողոցի **-րդ շենքի **-րդ բնակարան հասցեում և դրան կից օժանդակ կառույցներում հնարավոր է պահվեն իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող կամ իրավունք վերապահող կամ պարտականությունից կամ պատասխանատվությունից ազատող*

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 3-5:

փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, դրանք պատրաստելու համար սարքեր, սարքավորումներ, ինչպես նաև այնտեղ աշխատանքային համակարգիչներ և էլեկտրոնային սարքեր լինելու դեպքում, դրանցում կարող են պահվել նկարագրվածի վերաբերյալ տեղեկություններ, ուստի պետք է քննիչին թույլատրել խուզարկություն կատարել նշված հասցեում, իսկ առկայության դեպքում նաև դրան օժանդակ շինություններում: (...)»[2]:

9. Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 16-ի որոշման համաձայն՝ *«(...) ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵՇԴ/0073/07/15 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. (...):*

ՀՀ վճռաբեկ դատարանի վերոգրյալ նախադեպային որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումից հետևում է, որ բոլոր այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալը հնարավոր է գնահատման ենթարկել, այն կարող է հանդես գալ որպես խուզարկության կատարման ինքնուրույն հիմք, իսկ այն դեպքում, երբ օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալի գնահատումն անհնար է, այն ինքնին խուզարկության հիմք չի կարող հանդիսանալ, սակայն այլ տվյալների (այդ թվում՝ օպերատիվ-քննչական իրադրության) հետ համակցությամբ կարող է հաշվի առնվել խուզարկության կատարման անհրաժեշտության հարցը լուծելիս, հատկապես քննության վաղ փուլերում, երբ համապատասխան ապացույցներ դեռ ձեռք չեն բերվել:

Տվյալ դեպքում Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ նախաձեռնված վարույթով միջնորդությանը կից ներկայացված նյութերը համակցության մեջ վկայում են այն մասին, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացուցողական գործողություն կատարելու բավարար հիմքեր, նկատի ունենալով, որ խուզարկության կատարման արդյունքում կարող է ձեռք բերվել վարույթի համար նշանակություն ունեցող ապացույց: (...)

*Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշման վերը նշված հիմնավորումները դիտարկելով վերոգրյալ իրավական նորմերի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, գտնում է, որ այդ հիմնավորումներն ամբողջությամբ բխում են դրանցից, որպիսի պայմաններում այդ հիմնավորումներն ընդունելի են նաև Վերաքննիչ դատարանի համար: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ******* **********-ի անձնական կյանքի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը սահմանափակելու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունն իրավաչափ է, այն բխում է ՀՀ ներպետական, ինչպես նաև ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային իրավական ակտերի պահանջներից, ուստի փաստաբանի փաստարկները բավարար չեն ********* **********-ի բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումը ոչ իրավաչափ ճանաչելու համար:*

[2] Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 82-88:

*Ինչ վերաբերում է բողոքում նշված այն հանգամանքին, որ քննիչի կողմից Առաջին ատյանի դատարանին որպես բնակարանի խուզարկության կատարման փաստական հիմքեր ներկայացվել են բացառապես ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈ ԳՎ ՄՄԴՈՒՀԴՊ վարչության ֆինանսատնտեսական և մտավոր սեփականության ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնում ԱԱԾ-ից ստացված տեղեկությունների հիման վրա իրականացված ստուգողական գործողությունների արդյունքները, որոնք չեն կարող «բավարար տվյալ» չափանիշին համապատասխանել, ապա Վերաքննիչ դատարանը, ՀՀ վճռաբեկ դատարանի վերոգրյալ նախադեպային իրավունքի լույսի ներքո գնահատելով սույն հանգամանքը, հարկ է համարում արձանագրել, որ Առաջին ատյանի դատարան ներկայացված միջնորդությանը կից նյութերում առկա են այնպիսի փաստական տվյալներ, որոնք տվյալ դեպքում համակցության մեջ հնարավորություն են տվել գնահատման ենթարկել նշված ստուգողական գործողությունների արդյունքները: Հարկ է նշել, որ այդպիսի տվյալներ են հանդիսացել **.**********-ի և **.**********-ի հետ գրույցների վերաբերյալ տեղեկանքները: Մասնավորապես՝ **.**********-ը գրույցի ընթացքում հայտնել է, որ «********* *********» ՍՊ ընկերությունը զբաղվում է տեխնիկական փաստաթղթերի մշակման և տեխնիկական անվտանգության խորհրդատվությամբ ու ծառայությունների մատուցմամբ: Ընկերությունը տրամադրում է տարբեր ֆիզիկական և իրավաբանական անձանց տարբեր շինարարական տեխնիկաների շահագործման համար համապատասխան վկայականներ, որը տրամադրվում է կամավորության սկզբունքով: Իսկ ինչ վերաբերում է **.**********-ի հետ ունեցած գրույցին, ապա վերջինը հայտնել է, որ ընկերությունն իրականացնում է մասնագիտական ուսուցումներ որոշակի մասնագիտությունների ուղղությամբ, այդ թվում՝ արտադրական վտանգավոր օբյեկտների ինժեներատեխնիկական և բանվորական անձնակազմի: Միաժամանակ **.**********-ը նշել է, որ կոնկրետ կռունկավարների ուսուցման և վերապատրաստման գործընթացը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի թիվ 1048-Ն որոշմամբ, և համաձայն նշված որոշման 351 կետի՝ ամբարձիչ կռունկների շահագործման և սպասարկման գործառույթներում ընդգրկված ինժեներատեխնիկական մասնագետ կադրերի ուսուցումը և որակավորումն իրականացվում է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի պահանջներին համապատասխան, այսինքն՝ ուսումնամեթոդական ծրագրերի մշակումը, ոլորտի մասնագետների, փորձագետների, տնտեսության մեջ աշխատող ինժեներատեխնիկական մասնագետ կադրերի ուսուցման և որակավորման գծով աշխատանքների կազմակերպումը դա տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի լիազորությունների շրջանակներում է: **.**********-ը հայտնել է, որ կառավարության նախկին որոշման մեջ նման ձևակերպում չի եղել, և քանի որ նոր որոշման մեջ նման ձևակերպում է տրվել, ըստ իրեն այն հակասում է հավատարմագրման,*

*լիցենզավորման և կրթության մասին օրենքներին, քանի որ ըստ նոր որոշման՝ կոունկավարների ուսուցումը և որակավորումը միայն տվյալ տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի մենաշնորհն է: Այսինքն՝ վերոգրյալ գրույցներից պարզ է դառնում, որ «********* *********» ՍՊ ընկերությունը կազմակերպել է դասընթացներ և արդյունքում տրամադրել վկայականներ, ավելին՝ նշված ընկերության ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմնի ղեկավարը ծանոթ է եղել համապատասխան ողորտը կարգավորող նորմին, սակայն իր անհամաձայնություն է հայտնել դրա հետ: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈ ԳՎ ՄՄԴՈՒՀԴՊ վարչության ֆինանսատնտեսական և մտավոր սեփականության ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնում ԱԱԾ-ից ստացված տեղեկությունների հիման վրա իրականացված ստուգողական գործողությունների արդյունքները կարող են հանդես գալ որպես խուզարկության կատարման ինքնուրույն հիմք, քանի որ դրանց արդյունքում ստացված տվյալները հնարավոր են գնահատման ենթարկել: Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով վերոգրյալ եզրահանգումները, գտնում է, որ «********* *********» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Էրիկ Ալեքսանյանի հատուկ վերանայման բողոքը պետք է մերժել՝ Առաջին ատյանի դատարանի 2024 թվականի հուլիսի 19-ի որոշումը թողնելով անփոփոխ: (...)»*[3]:

<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

10. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունը, որ միջնորդությանը կից ներկայացված նյութերը բավարար փաստական տվյալներ են պարունակում **.********-ի բնակարանի անձեռնմխելիության իրավունքը սահմանափակելու համար:

11. ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք:*

2. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

[3] Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 25-33:

3. Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքով կարող են սահմանվել դատարանի որոշմամբ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման այլ դեպքեր»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 8-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:*

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քննչական գործողություններն են՝*

(...)

10) խուզարկությունը. (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քննչական գործողություն կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ դրա արդյունքում կարող է ձեռք բերվել տվյալ վարույթի համար նշանակություն ունեցող ապացույց»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Խուզարկությունը վարույթի համար նշանակություն ունեցող առարկաներ, նյութեր, փաստաթղթեր կամ տվյալներ, ինչպես նաև քննությունից թաքնվող մեղադրյալին, արգելադրման ենթակա գույքը կամ դիակ հայտնաբերելու նպատակով կատարվող որոնողական գործողություն է»:*

12. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) կայուն նախադեպային պրակտիկա է ձևավորել առ այն, որ խուզարկության վերաբերյալ յուրաքանչյուր որոշում պետք է պարունակի որոշակի նվազագույն տեղեկություններ, որոնք կապահովեն խուզարկություն կատարող անձանց գործողությունների օրինականության հետագա ստուգման հնարավորությունը[4]:

[4] Տե'ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Վան Ռոսեմն ընդդեմ Բելգիայի (Van Rossem v. Belgium)* գործով 2004 թվականի դեկտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 41872/98, կետ 45):

12.1. Եվրոպական դատարանը *Սմիրնովն ընդդեմ Ռուսաստանի* գործով կայացված վճռով ճանաչել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտումը, ի թիվս այլնի, հիմք ընդունելով, որ խուզարկություն կատարելը թույլատրելու որոշումը բովանդակում է չափազանց ընդարձակ եզրույթներ, այն չի պարունակում որևէ տվյալ՝ շարունակվող վարույթի և այն պատճառների մասին, որոնք հիմք են հանդիսացել ենթադրելու, որ տվյալ անձի բնակարանում խուզարկություն կատարելու արդյունքում կարող են ձեռք բերվել որևէ հանցագործության ապացույցներ: Եվրոպական դատարանը մասնավորապես նշել է, որ ներպետական դատարանը խուզարկությունը թույլատրելիս հողում է կատարել չորոշակիացված նյութերի՝ առանց նկարագրելու դրանցից որևէ մեկի բովանդակությունը և առանց ներկայացնելու որևէ հիմնավորում այդ նյութերի վերաբերելիության մասին: Արդյունքում՝ Եվրոպական դատարանը գտել է, որ պետական մարմինները թույլ են տվել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում [5]:

13. Վճռաբեկ դատարանը, *Մեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի* գործով անդրադառնալով բնակարանում խուզարկություն կատարելու փաստական հիմքին, նշել է, որ խուզարկության կատարման փաստական հիմք են «բավարար տվյալները»: Այլ խոսքով՝ տվյալների առկայությունն ինքնին խուզարկության կատարման փաստական հիմք չէ, քանի դեռ չի համապատասխանում բավարարության վերաբերյալ պահանջին: Տվյալների՝ բավարարության տեսանկյունից գնահատումը պետք է հանգեցնի այն ողջամիտ եզրահանգման, որ խուզարկության կատարման արդյունքում կարող են ձեռք բերվել փնտրվող առարկաները: Ընդ որում, օրենսդրորեն նախատեսված չէ տվյալների համակցության վերաբերյալ պահանջ: Այլ խոսքով՝ տվյալների բավարարության վերաբերյալ պահանջը որակական բնույթ է կրում. խուզարկության կատարման արդյունքում փնտրվող առարկաների հայտնաբերման հավանականության մասին եզրահանգումը կարող է հիմնված լինել ինչպես մեկ վերաբերելի և արժանահավատ տվյալի, այնպես էլ՝ տվյալների համակցության վրա: Խուզարկության կատարման փաստական հիմք կարող է հանդես գալ ցանկացած տվյալ, որը հնարավոր է գնահատման ենթարկել, և որպես այդպիսին, որպես կանոն, կարող են հանդես գալ *«քրեական գործի նյութերում առկա և որոշակի բնակարանում գործի համար նշանակություն ունեցող որոշակի առարկայի կամ անձի գտնվելու մասին տեղեկություններ պարունակող ապացույցները (կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, վկայի ցուցմունքներ և այլն)»:* Ինչ վերաբերում է օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալներին, ապա դրանք կարող են հանդես գալ որպես խուզարկության կատարման ինքնուրույն հիմք բոլոր այն դեպքերում,

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Սմիրնովն ընդդեմ Ռուսաստանի (Smirnov v. Russia)* գործով 2007 թվականի հունիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 71362/01, կետեր 43-44, 47:

երբ դրանք հնարավոր է գնահատման ենթարկել: Մասնավորապես, օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալը գնահատելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է հաշվի առնի միջոցառման՝ կոնկրետ տեսակին օրենքով առաջադրվող պահանջները, արդյունքների ամրագրման եղանակը, աղբյուրի՝ օրենքով սահմանված կարգով բացահայտման հանգամանքը և այլն: Իսկ այն դեպքում, երբ օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալի գնահատումն անհնար է, այն ինքնին խուզարկության հիմք չի կարող հանդիսանալ, սակայն այլ տվյալների (այդ թվում՝ օպերատիվ-քննչական իրադրության) հետ համակցությամբ կարող է հաշվի առնվել խուզարկության կատարման անհրաժեշտության հարցը լուծելիս, հատկապես քննության վաղ փուլերում, երբ համապատասխան ապացույցներ դեռ ձեռք չեն բերվել[6]:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Մեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի* գործով կայացված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները շարունակում են վերաբերելի մասով *(mutatis mutandis)* կիրառելի լինել նաև գործող քրեադատավարական կարգավորումների նկատմամբ:

13.1. Վճռաբեկ դատարանը *Ալբերտ Ալավերդյանի* գործով կայացված որոշմամբ նշել է. *«(...) [Խ]ուզարկություն կատարելու թույլտվություն տալու փուլին առաջադրվող հիմնական պահանջներից է դրա կատարման համար փաստական հիմքի առկայությունը: **Փաստական հիմքն այն բավարար տվյալներն են, որոնք հանգեցնում են ողջամիտ ենթադրության առ այն, որ տվյալ բնակարանում կարող են հայտնաբերվել գործի համար նշանակություն ունեցող նյութեր**: Տվյալների բավարարության վերաբերյալ պահանջը որակական բնույթ է կրում. խուզարկության կատարման արդյունքում փնտրվող առարկաների հայտնաբերման հավանականության մասին եզրահանգումը կարող է հիմնված լինել ինչպես մեկ վերաբերելի և արժանահավատ տվյալի, այնպես էլ՝ տվյալների համակցության վրա: **Խուզարկության կատարման փաստական հիմք կարող է հանդես գալ ցանկացած տվյալ, որը հնարավոր է գնահատման ենթարկել,** և որպես այդպիսին, որպես կանոն, կարող են հանդես գալ քրեական գործի նյութերում առկա և որոշակի բնակարանում գործի համար նշանակություն ունեցող որոշակի առարկայի կամ անձի գտնվելու մասին տեղեկություններ պարունակող ապացույցները:*

(...) «[Բ]ավարար տվյալներ» շեմի գնահատման առարկան չի կարող ներառել քրեական գործի ըստ էության քննության ժամանակ ապացույցների գնահատմանը բնորոշ տարրերը. խուզարկության կատարման համար փաստական տվյալների բավարար լինելը պետք է գնահատել քննության տվյալ փուլին բնորոշ առավել ցածր չափանիշով»[7]:

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԴԴ/0073/07/15 որոշման 22-23-րդ կետերը:

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ալբերտ Ալավերդյանի* գործով 2024 թվականի նոյեմբերի 25-ի թիվ ԵԴ1/0247/07/23 որոշման 11-րդ կետը:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ «********* *********» ՍՊ ընկերության 100 տոկոս սեփականատեր և տնօրեն ******** *********-ի **********-ի բնակության վայրում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու համար, գտնելով, որ հիշյալ բնակարանում և դրան կից օժանդակ կառույցներում հնարավոր է պահվեն իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող կամ իրավունք վերապահող կամ պարտականությունից կամ պատասխանատվությունից ազատող փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, դրանք պատրաստելու համար սարքեր, սարքավորումներ, ինչպես նաև այնտեղ աշխատանքային համակարգիչներ և էլեկտրոնային սարքեր լինելու դեպքում, դրանցում կարող են պահվել նկարագրվածի վերաբերյալ տեղեկություններ[8],

- Առաջին ատյանի դատարանը, բավարարելով նախաքննության մարմնի միջնորդությունը, գտել է, որ միջնորդությանը կից ներկայացված նյութերը համակցության մեջ վկայում են այն մասին, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացուցողական գործողություն կատարելու բավարար հիմքեր, և որ խուզարկության կատարման արդյունքում կարող է ձեռք բերվել վարույթի համար նշանակություն ունեցող ապացույց[9],

- Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշումն անփոփոխ թողնելով, արձանագրել է, որ ստորադաս դատարանի հիմնավորումներն ընդունելի են նաև Վերաքննիչ դատարանի համար և ******* *********-ի բնակարանի անձեռնմխելիության իրավունքը սահմանափակելու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունն իրավաչափ է: Անդրադառնալով վերաքննիչ բողոքում նշված այն հանգամանքին, որ քննիչի կողմից Առաջին ատյանի դատարան որպես բնակարանի խուզարկության կատարման փաստական հիմքեր ներկայացվել են բացառապես ոստիկանության իրականացրած ստուգողական գործողությունների արդյունքները, որոնք չեն կարող «բավարար տվյալ» չափանիշին համապատասխանել՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարան ներկայացված միջնորդությանը կից նյութերում առկա են այնպիսի փաստական տվյալներ, որոնք տվյալ դեպքում համակցության մեջ հնարավորություն են տվել գնահատման ենթարկել նշված ստուգողական գործողությունների արդյունքները: Վերաքննիչ դատարանը նշել է, որ այդպիսի տվյալներ են հանդիսացել ոստիկանության աշխատակիցների կողմից «********* *********» ՍՊ ընկերության աշխատակիցներ **.**********-ի և **.*********-ի հետ զրույցների վերաբերյալ տեղեկանքները: Վերաքննիչ դատարանը

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

գտել է, որ տվյալ դեպքում ոստիկանության իրականացրած ստուգողական գործողությունների արդյունքները կարող են հանդես գալ որպես խուզարկության կատարման ինքնուրույն հիմք, քանի որ դրանց արդյունքում ստացված տվյալները հնարավոր է գնահատման ենթարկել[10]:

15. Նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը, անձի բնակարանում խուզարկությունը թույլատրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելիս, հղում է կատարել չորոշակիացված նյութերի՝ առանց նկարագրելու դրանց բովանդակությունը և առանց ներկայացնելու որևէ հիմնավորում այդ նյութերի վերաբերելիության մասին: Մինչդեռ խուզարկության վերաբերյալ յուրաքանչյուր որոշում պետք է պարունակի խուզարկության փաստական հիմքի վերաբերյալ որոշակի տեղեկություններ, որոնք կապահովեն խուզարկություն կատարող անձանց գործողությունների օրինականության հետագա ստուգման հնարավորությունը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ միջնորդությանը կից ներկայացված՝ **.**********-ի և **.*********-ի հետ ոստիկանության աշխատակիցների կողմից զրույց ունենալու վերաբերյալ տեղեկանքները տվյալ դեպքում համակցության մեջ հնարավորություն են տվել գնահատման ենթարկել ոստիկանության իրականացրած ստուգողական գործողությունների արդյունքները, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ստորադաս դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ վարույթն իրականացնող մարմնին հայտնի են եղել օպերատիվ ճանապարհով հարցման ենթարկված անձանց, մասնավորապես՝ «********* *********» ՍՊ ընկերության աշխատակիցներ **.**********-ի և **.**********-ի անհատական տվյալները, սակայն նրանց հարցաքննելու և հարցման ընթացքում հայտնած տվյալները ճշտելու, դրանք հաստատելու կան հերքելու ուղղությամբ նախաքննության մարմինը որևէ միջոց չի ձեռնարկել:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում նախաքննության մարմինը ներկայացված նյութերով չի հիմնավորել, որ բավարար միջոցներ է ձեռնարկել **.**********-ի բնակարանի անձեռնմխելիության իրավունքը սահմանափակելու համար անհրաժեշտ փաստական տվյալները քրեադատավարական գործիքակազմով ամրագրելու ուղղությամբ, որի հնարավորությունն օբյեկտիվորեն ունեցել է:

15.1. Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ վարույթն իրականացնող մարմնի միջնորդության համաձայն՝ «********* **********»

[10] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

ՍՊ ընկերությունը ներկայում չունի ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից համապատասխան հավատարմագրում, մինչդեռ, վարույթի նյութերում առկա է ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի՝ 2024 թվականի մայիսի 23-ի գրությունն առ այն, որ *«(...) սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման կոմիտեն սույն թվականի ապրիլի 16-ին N 8/1 որոշմամբ ստանդարտի պահանջներին համապատասխան հավատարմագրել է «********* *********» ՍՊԸ-ի կազմում գործող ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմինը (հավատարմագրման վկայականի գրանցման համարը՝ N ***/*-***, գործողության ժամկետը 26.04.2024-26.04.2028թթ.)»*[11]:

16. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, հանգելով **.*********-ի բնակարանի խուզարկության փաստական հիմքի առկայության մասին հետևության, պատշաճ կերպով չեն ապահովել հանցագործության բացահայտման հանրային շահի և անձի բնակարանի անձեռնմխելիության իրավունքի միջև ողջամիտ հավասարակշռությունը:

17. Ընդհանրացնելով կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունը, որ միջնորդությանը կից ներկայացված նյութերը բավարար փաստական տվյալներ են պարունակում **.********-ի բնակարանի անձեռնմխելիության իրավունքը սահմանափակելու համար, հիմնավոր չէ:

18. Վերոգրյալը հիմք է ******* **********-ի իրավունքը խախտված լինելու փաստն արձանագրելու համար: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև արձանագրել, որ բնակարանում խուզարկություն կատարելու միջնորդությունը բավարարելու մասին ստորադաս դատարանի որոշումը կատարված լինելու փաստի ուժով չի կարող բեկանվել[12]:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոշարադրյալը և հաշվի առնելով արձանագրված իրավունքի խախտման բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է ճանաչել ******* *********-ի իրավունքի խախտման փաստը, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 16-ի որոշումը թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

---

[11] Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 14-15:
[12] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հովհաննես Չամսարյանի* գործով 2023 թվականի մարտի 2-ի թիվ ԵԴ/2848/07/19 որոշման 15-րդ կետը:

Ո Ր Ո Շ Ե Յ

1. Ճանաչել ****** ******-ի ********-ի իրավունքի խախտման փաստը:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 16-ի որոշումը թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ